

**ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ.
ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Անահիտ Զիջյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Վերարտադրողական մշակույթի ուսումնասիրությունը դարձել է նշանակալի հատկապես վերջին տարիների ընթացքում և կապված է դեմոգրաֆիկ մարտահրավերների, ազգային անվտանգության և ադեկվատ սոցիալական քաղաքականության մշակման խնդիրների հետ:

Բնակչության վերարտադրողական մշակույթը հանդիսանում է հասարակությունը բնորոշող հատկություններից մեկը, իր մեջ ներառելով մի կողմից վերարտադրողական տարիքի մարդկանց առօրեական պրակտիկան¹, մյուս կողմից այդ ոլորտի ինստիտուցիոնալ կարգավորման և տվյալ հասարակության սոցիալ-մշակութային ավանդությունները:

Ժամանակակից պայմաններում ՀՀ ռազմավարական նշանակության խնդիրների շարքում կարևորագույն դեր ունեն ժողովրդագրական գործընթացները՝ բնակչության թվաքանակի շարժընթացը, վերարտադրության առկա միտումները, վերարտադրության մշակույթը, միգրացիոն հոսքերը և որպես արդյունք՝ երկրում ձևավորված ժողովրդագրական իրավիճակը²: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական վերլուծության, ընդհանրացման և համեմատական մեթոդները:

¹ Ա. Շյուցի կողմից առաջարկված և ժամանակակից սոցիոլոգիայում լայն տարածում ստացած առօրեական աշխարհի (повседневный мир, повседневные практики) բովանդակության և դրսևորումների մասին մանրամասն տե՛ս **Шюц А.** Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии. М.: Институт Фонда «Общественное мнение», 2003, сс. 114-160.

² **Պտտոսյան Ա.**, ՀՀ-ում բնակչության վերարտադրության ժամանակակից միտումներ, տարածքային տարբերությունները և առկա հիմնախնդիրները// ԵՂՀ Գիտական տեղեկագիր, 2020, N 54 (1) էջ 53-61:

Սկզբնական փուլում ներկայացնենք որոշ վիճակագրական տվյալների վերլուծություն: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների Հայաստանի բնակչությունը նվազել է՝

տարի	1985	1994	2017	2018	2019	2020	2021
ամբ. բնակ. 1000 մարդ	3316.6	3740.2	2972.7	2965.3	2959.7	2963.3	2961.4
ծնելիություն ամբ. բնակ. 1000 մարդ	80.3	51.1	37.7	36.6	36.0	36.4	36.6
ամուսնություն	33173	17074	15 214	14 822	15 561	12 179	17 165
ամուսնալուծություն	3725	3402	3940	3820	3880	3155	4434

Վերջին հինգ տարիների կտրվածքով հայտնի պատճառներով ամուսնությունների և ամուսնալուծությունների ամենացածր մակարդակը վերաբերվում է 2020 թվականին, իսկ ծնելիության՝ 2019 թ.: Շատ տխուր է պատկերը ի համեմատ խորհրդային տարիների և 1994 թ. տվյալների: Ժողովրդական ցուցանիշներով Հայաստանը շարունակում է գտնվել ծնելիության ցածր ցուցանիշ ունեցող երկրների շարքում, որտեղ պարզ վերարտադրությունը լուրջ խնդիր է:³ Նշանակալիորեն փոխվել է նաև ամուսնությունների և ամուսնալուծությունների փոխհարաբերությունը, 2021 թվականից ամուսնալուծվում է ամեն 4 ամուսնություն, իսկ 1994թ.՝ ամեն 5-րդը: Հայաստանում բնական աճը դեռևս դրական է, բայց կա ռիսկ, որ այն կդառնա բացասական: Հարկ է հաշվի առնել նաև անպտղությունը, որը կազմում է 14.9%, իսկ երբ այդ ցուցանիշը բարձր է 5%-ից, դա արդեն իսկ համարվում է լուրջ դեմոգրաֆիական խնդիր:⁴

³ Տե՛ս ՀՀ վիճակագրական տվյալների տարեգիրք 1993-1994 թթ., <https://www.armstat.am/file/doc/99509143.pdf> <https://www.armstat.am/file/doc/99535998.pdf>

⁴ Տե՛ս Առաջնային և երկրորդային անպտղությունը Հայաստանում, <https://armenpress.am/arm/news/>

Մասնագետների գնահատմամբ, որպեսզի նախորդող սերունդները ուղղակի փոխարինվեն, անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր ընտանիք ունենա միջինը 2.6 երեխա:⁵ Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանում ծնելիության գումարային գործակցի ցուցանիշը մեկ կնոջ հաշվով կազմում է 1.7 երեխա: Մինչդեռ մեր երկրի բնակչության պարզ վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է, որպեսզի այդ գործակիցը լինի 2.1:

Վերջին 30 տարիների ընթացքում փոփոխվել է նաև առաջին ամուսնության տարիքային տեղեկները թե՛ հարսնացուների, թե՛ փեսացուների տարիքային տվյալներում: Առաջին անգամ ամուսնացած հարսնացուների միջին տարիքը 1995 թվականից մինչև 2021 թվականը աճել է մոտ 6 տարով (22,5-ից մինչև 28,4 տարի), փեսացուներինը՝ մոտ 5 տարով (26,5-ից մինչև 31,5 տարի): Այդ ամենը հստակ ցույց է տալիս հասարակության «ամուսնության տարիքային ծերացում»:

Բնակչության և զարգացման երրորդ միջազգային համաժողովը (ICPD, Կահիրե 1994) նշանավորեց բնակչության վերարտադրության հարցի վերաբերյալ միջազգային քաղաքականության ձևակերպման հիմնական պարադիգմային փոփոխություն մարդու վերարտադրության հիմնախնդիրների քննարկման ուղղությամբ: Այս տեղաշարժի գերիշխող հատկանիշը հասկացությունների վերաձևակերպումն էր ընտանիքի պլանավորման և բնակչության աճի վերահսկողության, որպես «վերարտադրողական առողջության» և «վերարտադրողական իրավունք»: Նոր դիսկուրսը հաշվի է առել ավելի լայն սոցիալական և վերարտադրության մշակութային համատեքստը, առաջացավ նաև պտղաբերության (fertility-զավակածնության) կառավարում⁶ հասկացությունը:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքում, վերարտադրողական մշակույթը կարող ենք սահմանել որպես արժեքների, նորմերի, գիտելիքների, հմտությունների և նյութական միջոցների համալիր, որոնք կարգավորում են մարդու վերարտադրողական վարքը: Վերջինս հանդես է գալիս գործողությունների և հարաբերությունների մի ամբողջություն, որն ուղղված է անհատի որդեծնության (fertility) կարգավորելուն գոյություն ունեցող ֆիզիոլոգիական, ազգամշակութային և սոցիալ-տնտեսական հնարավորությունների շրջա-

⁵ См. **Смирнова И.**, Демография: Учебно-методическое пособие, Калуга, 2004, с. 58.

⁶ International Conference on Population and Development, Cairo, Egypt, September 1994, pp. 5-13.
<https://www.un.org/ru/conferences/population/cairo1994>:

նակներում⁷: Որպես անձի ամբողջական դինամիկ կրթության արդյունք, այն ներառում է մի շարք բաղադրիչներ՝

- գիտելիք վերարտադրողական ռազմավարությունների մասին. պրոնաստալ առողջ երեխայի ծննդին նախապատրաստում, այդ թվում՝ ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաների հիման վրա, իսկ հականաստալ՝ պտղաբերության զսպում:
- արժեքային վերաբերմունքը ինչպես սեփական, այնպես էլ գույզնկերոջ վերարտադրողական առողջությանը:
- անվտանգ վերարտադրողական վարքագիծը, որը ենթադրում է պատրաստակամություն՝ գիտակցաբար ընտրելու վերարտադրողական ռազմավարություն, ինչպես նաև կողմնորոշում դեպի առողջ ապրելակերպ երկու գույզնկերների համար⁸:

Ժողովրդագրական քաղաքականության համատեքստում (ուղղված ամուսնության, ընտանիքում երեխաների թվի ավելացմանը և այլն) կարևորվում է երիտասարդների շրջանակներում ձևավորվող տեսակետները ընտանիքի ձևավորման, երեխաների նախընտրելի թվի, ամուսնության պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ:

Ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, ընտանիքում երիտասարդ ամուսինների վարքը և դերերի բաշխումը զգալիորեն տարբերվում է ավագ սերնդի ամուսինների վարքից: Երիտասարդ ամուսինները շատ ավելի հաճախ են կնոջն օգնում տնային աշխատանքներում, հոգ տանում երեխաների մասին, և, որպես կանոն, երկու ամուսիններն էլ մասնակցում են ընտանեկան կարևոր հարցերի քննարկմանն ու որոշումների կայացմանը: Նման փոփոխությունները հիմնականում պայմանավորված են կանանց կրթության մակարդակի բարձրացմամբ, մասնագիտական զբաղվածությամբ: Դա փաստում է նաև Առողջապահության նախարարության կողմից 2016 թ. իրականացված հետազոտությունը, ըստ որի միայն միջնակարգ կրթությամբ կանանց միջին որդեծնության գործակիցը կազմում է միջինում 2,8 երեխա, իսկ բարձրագույն կրթության պարագայում այն նվազում է 1,6 երեխայի:

⁷ Մանրամասն տե՛ս **Lawson D.**, Life History Theory & Human Reproductive Behaviour. https://www.researchgate.net/publication/236146645_Life_History_Theory_Human_Reproductive_Behaviour:

⁸ **Беляева М.**, Состояние культуры репродуктивного поведения в российском обществе // Вестник Челябинской государственной академии культуры и искусств. 2011, 3 (27), сс. 41-45.

Տնային աշխատանքների բաշխումն ավելի հաճախ է նկատվում այն ընտանիքներում, որտեղ երիտասարդ կինն ունի բարձրագույն կրթություն, ինչպես նաև ուսանողական ընտանիքներում: Ժամանակակից ամուսիններն ակտիվորեն ներգրավված են երեխայի դաստիարակության և նրա մասին հոգ տանելու խնդիրների մեջ, չնայած որ նրանց մասնակցությունն այնքան էլ զգալի չէ, որքան կինը կցանկանար⁹:

Ըստ ընտանիքի սոցիոլոգիայի մասնագետների հետազոտությունների արդյունքների՝ երիտասարդ ընտանիքի առանձնահատկություններից մեկը կապված է ժամանակակից մարդու, որպես անհատականության զարգացման հետ: Երիտասարդները հաճախ իրենց ընտանեկան հարաբերությունները համարում են ոչ միայն սիրո, վայելքի, սեռական կարիքների բավարարման, երեխաների առկայության իրացում, այլ նաև դիտարկում են իրենց իդեալների, ստեղծագործական, այդ թվում, մասնագիտական ձգտումների իրականացման հնարավորության և անհնարիության համատեքստում: Այդպիսի դիրքորոշումը, երբ մասնագիտական կամ ստեղծագործական ինքնաիրացումը ավելի է կարևորվում, քան ընտանեկան կյանքը, տիպիկ է դարձել թե՛ սոցիալական, թե՛ կանանց համար:

ՀՊՄՀ-ում 2018-2021 թթ. մագիստրոսական թեզերի¹⁰ շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծությունները հնարավորություն են տալիս արձանագրելու երիտասարդների շրջանում մի վերաբնակչության մշակույթի առանձնահատկություն: Երիտասարդների շրջանում ամուսնության իրենց համար նախընտրելի ձևի ընտրությունից պարզ դարձավ, որ հարցվողների 73,5%-ը նախընտրում է գրանցված ամուսնությունը, իսկ 4,7%-ը առանց գրանցման համակեցություն:

⁹ St´u Val Gillies, Family and Intimate Relationships: A Review of the Sociological Research// Families & Social Capital ESRC Research Group Working Paper, N. 2, June 2003, Published by South Bank University, p. 24. https://www.lsbu.ac.uk/_data/assets/pdf_file/0020/9335/family-intimate-relationships-sociological-families-research-working-paper.pdf, Հայաստանում երիտասարդների ընտանեկան մոդելի, ամուսնական հարաբերությունների, որդեծնության, երեխաների նախընտրելի թվի վերաբերյալ առկա հետազոտություններն են՝ Պողոսյան Գ., Գասպարյան Յու., Թադևոսյան Գ., և այլք:

¹⁰ Հեղինակի կողմից ղեկավարված «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ մագիստրոսներ Ա. Հովհաննիսյան 2022, Մ. Նիկողոսյան 2018, Լ. Ղահրամանյան 2018 սոցիոլոգիական (կիսաանալիզով հարցաթերթիկային, փորձագիտական, խորին) հարցումների, արդյունքների հիման վրա:

Կարող ենք ասել, որ գրանցված ամուսնությունը ավելի նախնորք-
լի է երիտասարդների շրջանում, քան առանց գրանցման համակեցու-
թյունը: Հարցվողների 14,9% դժվարացել է պատասխանել: Հարցվող-
ների շրջանում 6,9% երիտասարդներ չեն ցանկանում ամուսնանալ:
Երեխաներ ունենալու թիվը երիտասարդների շրջանում պայմանա-
վորված է կենցաղային, ֆինանսատնտեսական պայմանների առկա-
յությամբ: Հարցվողների 47%-ը վերափոխված պայմանների առկա-
յության պարագայում նախընտրում են ունենալ երեք երեխա: 23,7%-ը
նախատեսում է ունենալ չորս և ավելի երեխաներ, իսկ 18,6%-ը նա-
խատեսում է ունենալ երկու երեխա: Մեկ երեխա նախատեսվում է
2,3%-ը, 1,9%-ը չի նախատեսում երեխաներ ունենալ, իսկ հարցվողնե-
րի 6,5%-ը դժվարանում է պատասխանել:

Անդրադառնալով երիտասարդների երեք երեխայից պակաս երե-
խաներ ունենալու դրդապատճառներին հարցվողների շրջանում
35,3%-ը առանձնացնում են երկրի անկայուն վիճակը, 25,5%-ը բնակ-
չության ցածր եկամուտները և ապրանքների բարձր արժեքը, 14,7%-ը
նշել են կենցաղային վատ պայմանները, 9,8%-ը համարում են, որ երե-
խաների առկայությունը խանգարում է կարիերային և հանգստին,
4,9%-ը առանձնացնում են պետության կողմից բազմազավակության
խրախուսման ցածր մակարդակը, 10,8%-ը ընդգծել են ծննդաբերու-
թյան վնասը կնոջ առողջությանը, 12,7%-ը նշում են գործազուրկ դառ-
նալու վտանգը:

Իրականացված հետազոտությունները փոխլրացնում են նաև Հա-
յաստանի երիտասարդության ազգային զեկույցի շրջանակներում կա-
տարված համապատասխան հարցման արդյունքներով՝ հարցված ե-
րիտասարդների շուրջ 90%-ն ընտանիքի կազմավորման և լիարժեք
կենսագործունեության համար, ի թիվս այլ պայմանների, ամուսնու-
թյան համար պարտադիր պայման է համարում բնակարան ունենա-
լը¹¹:

Ըստ հարցման մասնակիցների, գրեթե նույն հիմնախնդիրներից է
կախված նաև ընտանիքում երեխաների հնարավոր թիվը: Թեև երի-
տասարդների 78,6%-ը ցանկություն է հայտնել ունենալ 2-4, իսկ 13,4%-
ը՝ 5 և ավելի երեխա, սակայն հարցվածների միայն 12,2%-ն է արդի
պայմաններում հնարավոր համարում ընտանիքում ունենալ 3 երեխա:

¹¹ «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց», 2007 թ., էջ 46:

գլխավոր խոչընդոտներից են համարվել ոչ բավարար բնակարանային պայմանները¹²:

Ժողովրդագրական տեսակետից նույնպես առկա է նկատելի հակասություն. երիտասարդները գիտակցում են ազգապահպանության հիմնախնդրի կարևորությունը, սակայն նրանց մեծ մասը կարծում է, որ անհրաժեշտ է ունենալ այնքան երեխա, որքանին հնարավոր կլինի ապահովել արժանավայել կյանքով:

Փորձագիտական հարցման վերլուծությունը հաստատում է կիսա-ձևայնացված հարցաթերթիկային հարցման արդյունքները՝ մեծ մասը ընտանիքում երեխաների օպտիմալ թիվ է համարում 3-4-ը: Այս թվի ընտրությունը պայմանավորված է բնական աճն ապահովելու ձգտումով: Փորձագետներից գրեթե բոլորը շեշտադրեցին, որ 2 երեխայի դեպքում պարզ վերարտադրություն է, բացի այդ պետք է հաշվի առնել նաև այն, որ գույգերի մի ստվար հատված ամբողջ կյանքում չի կարողանում երեխա ունենալ, իսկ երիտասարդների մի մասն այդպես էլ չի ամուսնանում:

Այսպիսով, թե՛ երիտասարդների, թե՛ փորձագետների հարցումները իրար լրացնում են, սակայն նկատվում են շեշտադրությունների տարբերություններ. մասնագետների կողմից հիմնականում շեշտադրվում է ազգապահպանության գործոնի կարևորությունը, սակայն հարցմանը մասնակցած երիտասարդների մեծ մասը կարծում են, որ անհրաժեշտ է ունենալ այնքան երեխա, որքանին հնարավոր կլինի ապահովել արժանավայել կյանքով: Խթանող գործոն է նաև բազմազավակությանն ուղղված պետական քաղաքականությունը, որը սակայն լուրջ վտանգներ է ծնում՝ աղքատության մշակույթի շարունակականության առումով:

Այսօր հայ հասարակության մեջ առճակատում է երկու հակադիր միտումներ. առաջին միտումը պետական և եկեղեցական քաղաքականությունն է՝ ուղղված երկու կամ երեք երեխաներով կայուն ընտանիքի ինստիտուտի պահպանելուն: Երկրորդը՝ արդիականությունը (մոդեռն) փոխեց կանանց վերարտադրողական մշակույթը, և նրանց էմանսիպացիան հնարավորություն տվեց կանանց ձեռք բերել տնտեսական անկախություն: Որպես հետևանք երիտասարդությունը չի շտապում ընտանիք կազմել և զավակ ունենալ:

¹² Հղումը բերվում է ըստ՝ ՀՀ Կառավարության որոշումը «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին, Եր., 2010, (20.02.2017) <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=56403//>

ԱՄՓՈՓՈՒՄ

Բնակչության վերարտադրության տեսակետից կարևոր է ընտանիքներում երեխաների թվի ավելացումը: Փորձագետների կարծիքով Վերարտադրողական մշակույթի դրսևորումները պայմանավորված են ֆինանսատնտեսական, սոցիալ-մշակութային, հոգեբանական, կրթական և այլ գործոններով: Ժողովրդագրական և սոցիալական քաղաքականության համատեքստում երիտասարդների վերարտադրողական մշակույթը ոչ միայն հետազոտական, այլև գործնական հետաքրքրություն է ներկայացնում:

Ժողովրդագրական տեսակետից առկա է նկատելի հակասություն. երիտասարդները գիտակցում են ազգապահպանության հիմնախնդրի կարևորությունը, սակայն նրանց մեծ մասը կարծում է, որ պետք է ունենալ այնքան երեխա, որքանին հնարավոր կլինի ապահովել արժանավայել կյանքով:

Բանալի բառեր. Երիտասարդ, վերարտադրողական մշակույթ, զավակածնություն, զավակածնությանը նպաստող գործոններ:

РЕПРОДУКТИВНАЯ КУЛЬТУРА АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ. СОЦИОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ

Джиджян Анаит

*Кандидат философских наук, доцент
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

С точки зрения воспроизводства населения важное значение имеет увеличение количества детей в семьях. По мнению экспертов, Проявления репродуктивной культуры обусловлены финансово-экономическими, социокультурными, психологическими, образовательными и другими факторами. В контексте демографической и социальной политики репродуктивная культура молодежи представляет не только исследовательский, но и практический интерес.

С демографической точки зрения наблюдается заметное противоречие: молодые люди осознают важность вопроса сохранения нации, но большинство из них считают, что для обеспечения достойной жизни

необходимо иметь должно быть столько детей, скольким можно будет обеспечить достойную жизнь.

Ключевые слова: молодежь, репродуктивная культура, рождаемость, факторы, способствующие рождаемости.

THE REPRODUCTIVE CULTURE OF ARMENIAN YOUNG PEOPLE. SOCIOLOGICAL ANALYSIS

Jijyan Anahit

*Candidate of Philosophical Sciences, Associate Professor
Senior researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law NAS RA*

SUMMARY

From the point of view of population reproduction, an increase in the number of children in families is important. According to experts, manifestations of reproductive culture are conditioned by financial, economic, socio-cultural, psychological, educational, and other factors. In the context of demographic and social policy, the reproductive culture of young people is both of research and practical interest.

The conducted research shows that the reproductive culture of the RA youth is characterized by international tendencies, such as, for example, late marriages. On the other hand, housing conditions and the unstable situation of the country play an important role. From a demographic point of view, there is also a noticeable contradiction: young people are aware of the importance of the issue of preserving the nation, but most of them believe that it is necessary to have as many children as one can to ensure a decent life.

Keywords: youth, reproductive culture, fertility, factors contributing to fertility.